

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՀՈՎՈՒԱԿԱՆԱՑՆ

ՊՈՔԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՎՆԻ

ԾԱՂԿԱՔԱՂ ԵՐԿՐՈՐԴ

ԱԼԵՔՍԻՍ

Վիրգիլ զպատանին իւր սիրելի կոչէ ի սմա Ալեքսիս , իսկ զինքն Կորիդոն . եւ եպերեալ նախ զխստութիւն պատանւոյն , պարծի ապա ընդ ինչս իւր , ընդ գեղ եւ ընդ հմտութիւն երգոց , եւ հրաւիրէ զնա յանտառս՝ զշինական զովելով կենցաղ , եւ խոստանայ նմա պարգեւս . եւ ապա իբր թէ սթափեալ յարեցութենէ սիրոյ , դառնայ յառտնին հոգս :

Ոչ է մարթ զհաւաստեալն զիտել՝ թէ ո՞ պատանին այն իցէ լեալ . բայց թուի մի յազատորդուց յանձնեալ Վիրգիլեայ ի վարժս , եւ անփոյթ խրատուց վարժապետին , որ զխնամս իւր առ նա աստանօր այլաբանեալ՝ քաղցրախառն սպառնալեօք զրաւ առնէ ողորանայն :

Ալեքսիս չըքնաղագեղ սիրէր հովիւրն Կորիդոն

Օ՜ անձկալին տեառն իւրոյ , եւ յոյս եւ ոչ մի զնա սփոփէր .

Ի՞նչ միայն մենաւոր՝ ի թաւամուր փիճեաց անտառ

Ղնայր նա ստէպ , ուր գազաթունք հովանախիտ սաւառնէին ,

Օ՜ ուր լերանց եւ մայրեայ հեղուլ բողոք սիրայորդոր .

Լ՛լէքս անկարեկիր , ոչ քեզ զերգոյս իմոց է փոյթ ,

Եւ ոչ ողորմիս ինձ . ի մահ ուրեմն ստիպես զիս :

Լ՛հա խաշն ի զովացիկ արդ վայելէ ի հովանի ,

Լ՛հա կանաչ մողիզաց ասպրնջականք լինին մացառք .

10 Եւ թէստի՛ պարտասելոցն ի հունձ յեռանդն արփիահրատ՝

Բզբուսակըս հոտեւանս լեսու զխըստոր եւ ըզծութին .

Լ՛յլ ընդ իս , մինչ ըզքեզ հետազօտեմ , կերկերաձայնք

Հընչեն ճըպուռնք ի թրփուտս ընդ բոցակէզ արեգակամբ :

Ոչ լաւ եւս էր բերել զԼ՛մարիլեայ եւ զԼ՛ենալկայ

Բզգառն զայրոյթ եւ ըզձանձիր ամբարհաւաճ .

Թէպէտ նա թըխատիպ , թէպէտ եւ դու սպիտակափայլ ,

Պարմանիդ գեղանի , մի յոյժ ի գոյն վըստահանար .

Իյոտին պայծառ բարձուենեակք , եւ կապուտակ քաղին յակինթք ,

Լ՛ըհամարհես զիս , ո՞ Լ՛լէքս , եւ ոչ թէ ո՞ իցեմ խընդրես .

- 20 Եւ քանի հարուստ խաշամբք եւ ճոխ ի կաթըն ձիւնաթոյր .
 Հաղարք ի սիկուլեան լերինս ամիկք ինձ թափառին .
 Ոչ զամառն ինձ դալար պակասէ կիթ , ոչ ի սարսուռ :
 Երգ ըզնոյն նուագեմ որ ինչ ի ծովափնեայն յԱրակինթ
 Երգել տիրկեանն Մմիին սովոր ի կոչ էր անդէոց :
 Չեմ այնչափ ինչ անգեղեայ , զիս ի ծովափն այժմ իսկ տեսի
 Որնչ անծուփ կայր ի հողմնոց . ի Վափնեայ իսկ չերկընչիմ
 Ի քումդ ատենի , եթէ չպատրէ երբէք պատկեր :
 Երբ քնակել եւեթ ընդ իս եթէ յանկարծ ախորժէիր
 Ի խըրձիթ անփառունակ եւ ի խոտան քեզ արտորէս ,
- 30 Կամ հարուլ զեղջերուս , եւ ըզքօշից ի միասին
 Հովուել ըզհօրան դալարագեղ ի տըղտենիս ,
 Եւ յանտառս երգակից ընդ իս ըզՊան նըւագէիր ,
 ԸզՊան՝ որ զեղեգունս ուսոյց յոգունս կըցել մոմով ,
 ԸզՊան՝ որ խաշին , նոյն եւ հովուին արկանէ խնամ :
 Եւ ոչ զիղջ լիցի մաշել քեզ ըզլըրթնեակ քո եղեգամբ .
 Օրնչ իսկ Մմիտաս ոչ առ ի սոյն արար ի վարժ .
 Եւ սրինգ ինձ յեթնեկի յանգոյգ ծղօտից շարայարեալ ,
 Օր ի ձօն ինձ երբեմն ետ Վամետաս , եւ Վու երկրորդ
 (Որպէս ասացն ինձ ի պարզել ոգւոցն) այժմիկ ժառանգես զայդ :
- 40 Եւսայ Վամետաս , նախանձ անմիտն եբեր Մմիտ :
 Եւ յծեմունք են իմ կըրկնակ գըտեալք ի ձոր ոչ անվրտանգ ,
 Օրըս քեզ պահեմ , դեռ այն ինչ ի սպիտակ խայծեալս ի բղէտ ,
 Օ երկուորեակս հանապազօր ի ծուծ զըստինս ըսպառելով .
 Ոչ ուրեմն ըզնոսին խընդրէ առնուլ յինէն (Վեստիլ ,
 Եւ առցէ իսկ , զի խոտան յալըս քո նուէրքըս մեր թըլին :
 Եւրի էկ , պատանեկիկ չըքնաղագեղ , էկ այսր առ իս .
 Վեզ շուշանս յաւերժ հարսունք բերեն լիովք ահա կայթիւք .
 Շահպուրակ պայծառագեղըն քեզ Վայիս քաղէ գունատ ,
 Ըզխորիտ կակաչ եւ զանեթոն կապէ բուրեան խառն ընդ նարգէս .
- 50 Եւ յեռեալ ընդ նարդոս ու 'նդ այլ բուսակս անուշահոտ
 Երգունէ զյակինթ քընքուշ եւ ըզգեղձան արեւադէմ :
 Իսկ ես ալեւորիկ քեզ յաղուամազըս սերկեւիլ
 Վաղեցից եւ շագանակ՝ զոր սիրէր իմս Մմարիլիս .
 Յաւելից եւ շէկ շըլոր , մի եւ մըրգիկն այն խոտեսցի :
 Հատից եւ զձեզ սարդենիք , եւ զքեզ մօտիկըդ մըրտենի .
 Օ ի բուրումն անուշից խառնեսջիք մերձ եղեալ միմեանց :
 Վեղջուկ ես , Լորիդոն . խոտէ զընծայս քո Մէքսիս ,
 Եւ ձօնիւք եթէ մըրցիս , ոչ քեզ տեղի տացէ Յոլաս :
 Եւ աղ եղուկ , զինչ հիքիս ինձ հնարեցայ . արկի զխորշակ
- 60 Նանծաղամիտս ի ծաղկոց , եւ ի վըձիտ աղբեր ըզկինձ :
 Եւս , յումմէ խուսես , անմիտ . դիք իսկ եղեն անտառաքնակք ,

Պարգանիկն իսկ Պարիս, եւ յիւրակերտն ինքնն Պալլաս
Ի գղէկի անդ բնակէ . մեզ գերաբնակք լիցին անտառք :
Լուիծ ամեհի հալածէ զգայլ, եւ գայլ իսկ զայծ ,
Լա այծ ըստահակ ըզծաղկաւէտ խընդրէ ըզսինձ .
Իսկ ըզհետ քո ի խընդիր է Կորիդոն , ո՛ր Լէքսիս .
Իւրոցն իւրաքանչիւր ոք տարփանաց ձրգի ըզհետ :

Լալ երինջք յետս աւասիկ ածեն զարօր լոյծք ի լոծոյ ,
Լա տեղի տայ արեգակըն զաճեցուն ձրգտեալ ըստուերս .

- 70 Իսկ զիս տոչորէ սէր , եւ չիք սիրոյ դուլ եւ դադար .
Լ՛հ , Կորիդոն Կորիդոն , զինչ այդ քոյին անմրտութիւն .
Կիսայատ մընայ քեզ որթ սաղարթագեղ ի նըշդարւոյ :
Լա իմէ գէթ ի յոզոր կամ ի ճապուկ դու ի պըրտու
Ոչ հըսեւ ինչ հայթհայթես , ոյց շինական կարօտին պէտք :
Պարտցես զայլ ոք Լէքսիս , եթէ դա զքեզ արհամարհէ :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

- 23 . Արախիւն լեառն ծովահայեաց 'ի Բիովտիա մերձ 'ի Թեբէ :
24 . Արախիւն որդի Արամազդայ եւ Անտիոպէայ . քանզի Անտիոպէ էր կին Լիկոսի արքային Թեբացոյ ,
արձակեալ 'ի նմանէ եւ 'ի Տիրկեայ երկրորդ կնոջն նորա 'ի բանտ արկեալ : Բայց յերկունս գորով
Անտիոպէայ՝ ազատեաց զնա Արամազդ 'ի բանտէ , եւ խոյս տուեալ նորա 'ի լեառն Վիթերոն ,
ծնաւ անդ երկուորեակս 'ի բացի . զորս գտեալ հովուաց , զմի 'ի նոցանէ կոչեցին Զետոս , իսկ
զմեւն Ամփիոն : Սորա ապա 'ի զարգանալ իւրեանց խնդրեցին զվէժ մօր իւրեանց՝ սպանեալ
զՏիրկէ , զոր Դիոնիս աղակերպեաց յաղբիւրն համանուն մերձ 'ի Թեբէ . ուտաի Ամփիոն զմեւս .
նունն առեալ՝ կոչի տիրկեան :
33 . Պա շինական եւ հովուական իրաց վերակացու գիւք , որ ուսոյց կազմել զսրինգ յանհաւասար եղէ .
գանց , յօրինեալ զայն նախ 'ի պատճառս սիրուհւոյն իւրոյ Սրինգի յաւերժհարսին՝ որ նաժշտացն
նորա աղաչանք յեղէգն փոխեցաւ , վասն որոյ եւ զնուագարանն զայն ասեն « Բիւֆ կոչեցեալ :
47 . Յաւերժհարսուէք կոչին առ Հելլէնս Նիմփայք , այսինքն նորահարսուէք : 'Ինցունէքս այսոքիկ
ըստ Պաւսանիայ չէին անմահք , այլ երկարակեացք յոյժ : Որք 'ի սոցանէ գետոց էին շահապետք՝
կոչէին Նայադք . որք ծովուց՝ Ներէանք , իւր Ներէի եւ Դորեայ գետերք . որք լեռանց էին վերակա-
ցուք՝ կոչէին Որէադք , որք ծառոց եւ անտառոց՝ Դրիադք եւ համադրիադք , զի համարէին մեռա-
նել ընդ ծառս՝ յորս բնակէին . Պարաիլացն սասիկանք՝ կոչէին Նապեանք , արօտիցն՝ Լիմոնիադք ,
իսկ լճացն՝ Լիմնիադք :
48 . Շահադրակաց գունագոյն աղբք են , կարմիր , վարդագոյն , սպիտակ , եւ այլն . այլ աստ սպիտակն
գունաք ակնարկէ 'ի գոյն սիրոյ :
49 . Կակաչ , Նարկիս եւ Լնեթոն պատանիք գեղանիք էին , որ ապա ըստ առասպելաց 'ի համանուն
ծաղկունս փոխեցան . Կորիդոն 'ի մատուցանել Լէքսի զծաղկունս զայստիկ՝ աղգ առնէ նմա
թէ գուցէ նոյն անցք եւ ընդ նա անցանիցեն :
59 . Ամնարկէ 'ի սնտոի վաստակս իւր , իւր թէ զծաղկոց մասնէր խորշակի , եւ կնճից զականակիտ
աղբերս :
62 . Պարիս որդի Պրիամու եւ Եկովբայ , արկեալ 'ի հօրէ իւրմէ յանտառս . քանզի Եկովբայ տեսանելով
յերազի ջահ բոցավառ յիւրմէ ծնեալ , գուշակեցին երազահմայք զի առիթ կործանմանն Տրո-
վադայ հանդերձեալ էր ծնանել մանուկն : Վասն որոյ անա ընդ հովիւս . եւ 'ի տօնս խաղուց
մրցմանց 'ի Տրովադա պարտեալ 'ի նմանէ Հեկտոր , միշտու առ զայրոյթ սրտին կամքը զնա սպա-
նանել՝ ծանեալ զի եղբայր իւր էր : Եւ կոչի նա Դաւիթի 'ի Դարդանոսէ , որ մի էր 'ի կառու-
ցողաց քաղաքին Տրովադայ :
— Պաւսանիոս գրուստը Արամազդայ , գիւք արուեստից եւ շինուածոց հնարագէտ , յորմէ ամենացիւք հա-
մարէին կառուցեալ զգղեակ իւրեանց :
68 . Աստ ուրեմն Կորիդոն 'ի գագարելոյ արջառոց յաշխատութենէ եւ 'ի մոլոց արեգակնն 'ի միտ ա-
ռեալ զկորուստ ժամանակին , եւ յարեցուն թենէ սիրոյն սթափեալ եւ զգաստացեալ , մեղադրէ
անձին :
74 . Այսինքն կողովոց եւ սակառեաց , եւ այլն , որոց կարօտին շինականք :